

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Արդարութիւնը կը գանգատի, երբ մարդիկ զինք կը դատեն տարբեր ձեւով եւ ոչ թէ այնպէս, ինչպէս կը դատէին ուրիշները:

Դատաւորը պատիժներու պիտի չենթարկէ յանցաւորը, եթէ առանց իրաւունքի հանդէպ մեղանշելու կարող է անոր անպատիժ ձգել, որովհետեւ պատժելով ոչ թէ իրաւունքը կը պաշտպանէ՝ այլ անգուր կը դարձնէ:

Կան մարդիկ, որ կ'ուզեն արդար օրէնքները ծառայեցնել իրենց կամփին: Աստուծոյ անօրէններն ու կամապաշտներն են, որոնք չեն հասկնար՝ որ օրէնքը պիտի իշխէ մարդու կամփին վրայ եւ ո՛չ թէ մարդուն կամփը՝ օրէնքին: Որովհետեւ եթէ մարդու կամփը օրէնք ըլլար, կ'ըլլային այնքան օրէնքներ՝ որքան մարդիկ:

Բայց օրէնքը, նաեւ կը պահանջէ իրեն հնազանդողներ: Եթէ ամէնք իրենց կամփը իբրեւ օրէնք ներկայացնէին, ամէնքն ալ իշխող կ'ըլլային, եւ ո՞վ կը հրճանազանէր օրէնքին, բացի եթէ միայն մէկ անձ մնար աշխարհի վրայ: Այդ պատճառով, իւրաքանչիւր ազգի նախնիին օրէնսդիրները բարի օրէնքներ սահմանեցին, որպէսզի ամէնքը մէկ կամփով միաբանին:

Չարժեք բնակիլ այն քաղաքը, ուր օրէնք կամ օրինապահ դատաւոր չկայ, որովհետեւ ուր որ օրէնք չկայ մարդիկ անօրէն կ'ըլլան եւ ո՞վ կարող է անօրէններու մէջ անվնաս մնալ. կամ եթէ օրէնք ըլլայ, բայց դատաւորը օրէնքի հրամանները չգործադրէ, գրկուածը ո՞ւր պիտի դիմէ իրաւունք՝ փնտոնելու, որովհետեւ այդպիսիները օրէնքի ջատագովք են...

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ՈԳԵՀԱՐՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԳԱՒԱԹ ԴԱՐՉՆԵԼ

«Ոգին սկսաւ պատասխանել նոյն մեր չըրած հարցումներուն: Քանի տակաւին մեր մտքերուն մէջ կը կասկածէինք, թէ իսկապէ՞ս ոգին Տիրոջ դեսպանն է, մեզի ըսաւ. «Անվախօրէն հաւատացէ՛ք, Աստուծոյ զիս զրկած է: Կ'ուզէ ինքզինք ձեզի յայտնել, որովհետեւ ճշմարտօրէն զինք կը փնտռէք: Աստուծոյ որուն ինչպէս որ ուզէ՝ կը յայտնուի»»:

Յետոյ ոգին ըսեւ էր, որ իրենք Աստուծոյ գործին վկաները պիտի ըլլան, եւ պէտք է վկայեն իր գալուստին մասին, քանի զեւ չէ հասած մեծ դատաստանի օրը: Անոնք հաւատացեր էին, որ ինքը՝ Յիսուսն է խօսողը: Օրեր ու շաբաթներ շարունակ՝ այս խօսքերուն ազդեցութեան տակ կը գտնուէին: Երեք տարեկան աղջնակի մը ոգին ինքզինք ներկայացուցեր էր իբրեւ Աստուծոյ պատգամաբեր, եւ խոստացեր էր զիրենք իր քով առնել միայն այն ատեն, երբ իրենց վկայութիւնները աւարտեն: Ամուսինները այնպէ՛ս մը ինկեր էին այդ ոգիին ազդեցութեան տակ, որ նոյնիսկ կը մոռնային ուտել, կամ իրենց գաւակները կերակրել: Վիճակը երթալէն կը վատթարանար: Ոգին կը ստիպէր կնոջ սարսափելի յիմարութիւններ խօսելու, եւ իրեն այնպէս կը թուէր՝ թէ իր սրտէն կը բխին այդ խօսքերը: Անգամ մը այդ տանջանքներուն մէջ ըսաւ....

Շարունակելի

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՐԻՍ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՐԻՍ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 23 ԴԵՎՏԵՄԲԵՐ, 2012

ԹԻՒ 52

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 18.9-14

Ե.ՅԻՍՆԱԿԻ


Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները

կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, ու միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուծոյ իմ, շնորհակալ եմ քեզի՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուծոյ, ներէ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի,- եզրակացուց Յիսուս,- ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

«Աստուծոյ, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Այս բառերը արտասանելով մաքսաւորը արդար գնաց իր տունը: Մենք եւս սիրելի ընթերցող մեր միակ խնդրանքը, որ պէտք է բարձրացնենք առ Աստուծոյ՝ մեր մեղքերուն ներում եւ անձերու փրկութիւնն է: Աստուծոյ ամէն ինչ տուած է մեզի եւ միշտ կը հոգայ մեր պէտքերը: Ապրինք քրիստոնէավայել կեանքը առանց հպարտանալու՝ խոնարհութեամբ եւ խոհեմութեամբ, այն ատեն Աստուծոյ ինք պիտի բարձրացնէ մեզի:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ



Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Սուրբ Ստեփանոս նախավկան առաջին դարուն ապրած քրիստոնեայ է՝ առաջին նահատակը, որ իր արիւնը թափեց Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Որդի դաւանելու համար: Յիսուսի 72 աշակերտներէն մէկն է ան, որ վեց ընկերներուն հետ Պետրոս առաքեալ առաջին սուրբ սեղանին սպասաւոր կարգեց: Ս. Ստեփանոսի մասին Ս. Գիրքը կ'ըսէ, որ ան աստուածային «չնորհքով ու զօրութեամբ» լեցուած էր, «... ժողովուրդին մէջ զարմանալի գործեր եւ մեծ հրաշքներ կը գործէր» (Գրծ 6.8): Ան Սուրբ Հոգիին զօրութեամբ լեցուած կը քարոզէր Յիսուս Քրիստոսը, որուն հետեւանքով արտասահմանէն եկած հրեաները, Երուսաղէմացի ժողովուրդը, քահանայապետներն ու օրէնսգէտները զրգռեցին սուրբին դէմ, որոնք զայն բարձրագոյն ատեանին յանձնեցին: «Եւ սուտ վկաներ բերին, որոնք կ'ըսէին՝ այս մարդը անդադար կը հայհոյէ սուրբ տեղին ու օրէնքին դէմ:

«...Եւ բոլոր անոնք, որոնք նստած էին ատեանին մէջ, անոր նայելով տեսան, որ անոր դէմքը հրեշտակի կը նմանէր» (Գրծ 6.13-15):

Պատասխանելով իրեն ուղղուած այս զրպարտութեան, Ստեփանոս նախավկան ատեանին մէջ սկսաւ Սուրբ Հոգիով մեկնել Հին Կտակարանը, ըսելով թէ հին մարգարէներ վկայած են Արդարին, Մեսիային՝ Յիսուս Քրիստոսի գալուստին մասին: Ու եզրափակելով իր խօսքը՝ կ'ըսէ. «Ձեր հայրերը մարգարէներէն ո՞ր մէկը չհալածեցին: Անոնք սպաննեցին բոլոր անոնց, որոնք սկիզբէն իսկ պատմեցին Արդարին գալուստին մասին, զոր մատնողն ու ըսպաննողը դուք եղաք, դուք՝ որ հրեշտակներու հրամանով օրէնքը ստացաք, սակայն զայն չգործադրեցիք» (Գրծ. 7.52-53):

Ստեփանոս Նախավկան քարկոծած ու սպաննած են Երուսաղէմի շրջակայքը, մինչ նոյն պահուն ան ըսած է. «Ահա կը տեսնեմ երկինքը բացուած եւ մարդու Որդին Աստուծոյ աջ կողմը կանգնած» (Գրծ. 7.55):

Ս. Ստեփանոս առաջին նահատակն է, որուն արեան հեղուժով ճամբան կը բացուի հետագայ դարերու բոլոր վկաներուն ու մարտիրոսներուն:

Հայ եկեղեցին Ս. Ստեփանոսի յիշատակը կը տօնէ մեծ տօներու հետ՝ Դեկտեմբեր 25-ին կամ անոր յաջորդող օրը (Եթէ 25 Դեկտեմբերը Կիրակի կամ պահոց օր հանդիպի):

ԱՌԱՎՆԵՐ Գլուխ Բ. 1-2

Որդեակ, եթէ իմ պատուիրաններս հոգւոյդ մէջ պահես եւ գործադրես զանոնք՝ ունկնդիր պիտի դառնաս իմաստութեան, սիրտդ գիտութեամբ պիտի հարստացնես եւ զանոնք որպէս իրատ՝ աւանդես զաւելիդ:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Արդ, ան որ սորվի եւ Կիրակի եկեղեցի երթայ ու պատարագ տեսնէ, Աւետարանի ձայնը լսէ եւ խոստովանութեամբ սրբուի իր մեղքերէն, ան արժանի կ'ըլլայ Քրիստոսի տեսութեան եւ երանաւէտ ձայնին, որ կ'ըսէ. «Եկէ՛ք Հօրս օրհնածներ, ժառանգեցէ՛ք արքայութիւնը» (Մատ. 25.4): Եւ ինչպէս որ Կիրակին յարութեան օր է, նոյնպէս ամէն մարդ որ շաբթուան վեց օրերը իր հոգին մեղքերով կը մեռցնէ, Կիրակի բոլոր յանցանքները խոստովանելով յարութիւն կ'առնէ եւ ապաշխարութեամբ կը վերականգնի:

Կիրակին տէրունի օր կ'ըսուի, որովհետեւ Աստուծոյ բաժինն է եւ մեր հոգիի փրկութեան օրը. հրաման չկայ մարմնական որեւէ գործ կամ խօսք ընելու, այլպէս անէծք ու դատապարտութեան կ'ենթարկուինք: Ոմանք Կիրակի օրերը թէեւ չեն աշխատիր, սակայն արբենալով ու ծաղրելով կը մեղանչեն, ինչ որ աւելի մեծ չարիք է քան աշխատիլը եւ աններելի մեղք է:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խոստովանութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած մեծ բարիք է եւ պարգեւ, հոգիի կենդանութիւն եւ բժշկութիւն: (Մեր յաջորդ թիւին մէջ, սիրելի ընթերցող, պիտի փոխանցենք քեզի Խոստովանութեան մասին):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐՁՆԿԱՅԻ

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

Կիրակի օրը եկեղեցի երթա՞մ, թէ տունս՝ իմ սենեակս աղօթեմ. այդ մէկը բաւարար է ինձի համար

Վարդան Վարդապետ Այգեկցի կ'ըսէ. Քրիստոս աղօթողին այսպէս հրահանգեց. «Քու սենեակդ մտի՛ր եւ փակէ՛ քու դռներդ, եւ գաղտուկ աղօթք ըրէ՛ քու Հօրդ» (Մատթէոս 6.6): Այստեղ մարմինը եւ սիրտը սենեակ կը կոչէ եւ կը պատուիրէ մարմնական ամէն խորհուրդ՝ աղօթքի ժամանակ մտէն հեռացնել:

Քրիստոնեայ ժողովուրդէն մէկը, երբ լսէ եկեղեցւոյ զանգին ձայնը՝ գիշեր թէ ցերեկ առնել, մանաւանդ Կիրակի օրը, որ տէրունական օր է, եւ եկեղեցւոյ՝ երկինքի արքայութեան դուռը չ'երթար, քահանայ չի տեսնիր, ու չի լսեր Աստուծոյ պատուիրաններուն հրամանը՝ պիտի չտեսնէ փառաց Տէրը բազմած՝ քահանայ կենդանիներուն վրայ: Ուստի, ան որ Կիրակի օրը չի տեսնիր եկեղեցականը եւ չի խոստովանիր իր յանցանքները, Աստուծոյ փրկութիւնը պիտի չունենայ:

Վարդան Վրդ. Այգեկցի

ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Երկնաւոր թագաւոր, տա՛ր ինձի՝ Քու արքայութիւնդ՝ գոր Քեզ սիրողներուն խոստացար եւ զօրացա՛ր իմ սիրտս՝ որպէսզի մեղքը առնեմ եւ միայն Քե՛զ սիրեմ եւ Քո՛ւ կամեմ կատարեմ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինձի՛՝ բազմամեղիս:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
40.18-31

Որո՞ւ կը նմանցնէ՞ գԱստուած կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէ՞:

Կուտփի՞: Բայց ձուկագործն է որ կուտփը կը ձուկէ, ու ոսկեբիչը գայն ոսկիով կը պատէ եւ արծաթէ շղթաներ կը շինէ անոր համար:

Նմանապէս հիւսնը անփուտ ծառի կոնդ մը կ'առնէ եւ իր նարտարութեամբ կ'աշխատի անկէ անշարժ կուտփ մը շինելու:

Այնքան տգէ՞տ է՞, չլսեցի՞՞ք կամ ձեզի չպատմուեցա՞ւ երբեք Աստուծոյ մասին, որ երկրին հիմերը դրաւ:

Աստուծոյ մասին, որ կը նստի երկրագունդէն ա'յնքան վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու չափ կ'երեւին իրեն: Ա՛ն է որ երկինքը վարագոյրի պէս կը տարածէ եւ գայն վրանի պէս կը կանգնէ իրեն համար:

Ինքն է որ իշխանները կը բնաջնջէ եւ երկրի դատաւորները կ'ոչնչացնէ:

Բոյսի մը պէս անոնք հագիւ տնկուած կամ ցանուած, եւ տակաւին հողին մէջ չարմատացած՝ կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը զանոնք կը տանի յարդի պէս:

Արդ, «Որո՞ւ կը նմանցնէ՞ զիս, ո՞վ կը հաւասարի ինծի», կ'ըսէ Սուրբը, Աստուած:

Երկինք բարձրացուցէ՛ք ձեր աչքերը եւ դիտեցէ՛ք. ո՞վ ստեղծեց այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք իրենց անուններով կը կանչէ: Ա՛յնքան մեծ է իր իշխանութիւնը եւ սաստիկ՝ իր գորութիւնը, որ անոնցմէ ոեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն:

*Շարունակելի
Աստուածաշունչէն*

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

4.16- 5.10

Այսուհետեւ համարձակօրէն մօտենանք Աստուծոյ աթոռին, որորմութիւն եւ շնորհիք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն ֆահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ գոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Անոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է գոհ մատուցանէ:

Գիտէ՞ք նաեւ, թէ ոեւէ մէկը չի կրնար ինքն իրեն ֆահանայապետութեան պատիւը առնել, այլ Աստուած է որ գայն այդ պաշտօնին կը կանչէ, ճիշդ ինչպէս Ահարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ ֆահանայապետութեան պատիւը, այլ գայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. «*Դուն իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ*», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «*Դուն յաւիտեան ֆահանայ ես, Մելքիսեղեկ ֆահանային պէս*»:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահէն փրկել:

*ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՄԵՆ*